ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 037/2014-Լ

Արդարադատության ակադեմիայի ունկնդիրներին կրթաթոշակ նշանակելու մասին

17.03.2014թ. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով,

Հրամայում եմ՝

1. Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության խորհրդի 2013թ. դեկտեմբերի 25-ի թիվ ԱԽ-31-Ո-40 որոշումը, ՀՀ գլխավոր դատախազի 2014թ. մարտի 5-ի թիվ 74 հրամանը, ինչպես նաև Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2014թ. փետրվարի 25-ի թիվ 5-Ա և 2014թ. մարտի 3-ի թիվ 8-Ա որոշումները՝ Արդարադատության ակադեմիայում մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին (ցանկը՝ համաձայն հավելվածի, այսուհետ՝ Ունկնդիրներ) նշանակել կրթաթոշակ ուսումնառության ողջ ընթացքի համար (2014թ. մարտի 17-ից մինչև նոյեմբերի 30-ը):

2. Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության 2014թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետը և 5-րդ կետը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի Հավելված 9-ը և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ «Դատական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» 2006թ. դեկտեմբերի 19-ի թիվ 09-Լ որոշումը՝ Ունկնդիրներին տրամադրվող կրթաթոշակի չափը սահմանել՝

2.1. Ամսեկան 100.800 ՀՀ դրամ՝ 2014թ. մարտի 17-ից հունիսից 30-ն ընկած ժամանակահատվածում.

2.2. Ամսեկան 175.932 ՀՀ դրամ՝ 2014թ. հուլիսի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**